Կարծիք

Նազելի Գառնիկի Սուքիասյանի «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ԺԲ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտության իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման սեղմագրի վերաբերյալ

ՀՀ ֆինանսաբանկային համակարգը բովանդակային առումով հանրապետությունում ձևավորված ֆինանսական համակարգի ամենակողմնորոշված օղակներից մեկն է, որի առանցքը ամփոփված է գործող ֆինանսական օրենսդրությամբ:

Այսօր, շուկայական հարաբերություններին ներհատուկ ֆինանսական համակարգի ձևավորումով և կայունությամբ է պայմանավորված մեր հանրապետության տնտեսական ինքնուրույնությունը և անվտանգությունը ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային ֆինանսական համագործակցության փոխհարաբերություններում:

Ֆինանսական օրենսդրության ձևավորումը և ներկա զարգացման տեմպերը հրամայաբար պահանջ են առաջադրում առաջին պլանում տեսնել ֆինանսական պատասխանատվության և իրավախախտումների վարույթի իրավական այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են ֆինանսահիրավական հարկադրանքը, սանկցիաները, ֆինանսահիրավական պատասխանատվությունը, ինչպես նաև հարկային, բանկային, արժութային կարգավորումները և պատասխանատվությունը, որոնց իրավական կարգավորման մշակումները կհարստացնեն ոչ միայն ֆինանսական իրավունքի տեսությունը, այլև կնպաստեն նրա առանձին ենթաճյուղերի պատասխանատվությունը սահմանող օրենսդրության կատարելագործմանը և իրավաբանական պատասխանատվության ավանդական տեսակների համակարգում ֆինանսահիրավական պատասխանատվության ինքնուրույն գործողության փաստի ճանաչմանը:

Ներկա ժամանակաշրջանում, մեր երկրի սոցիալ-տնտեսական կյանքում արմատավորվում են սեփականության նոր ձևերը, արժութային և արտարժութային հարաբերությունների իրավական կարգավորման ուսումնասիրությունները բարձ-

բացնում են ֆինանսական իրավունքի գիտության և ֆինանսական պատասխանատվության ու վարույթի դերը, որի ուսումնասիրության առարկան ներպետական ֆինանսական գործունեության վերլուծությունից բացի ընդգրկում է պետությունների ֆինանսական համագործակցությունը:

Ն. Սուքիասյանի «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները ՀՀ-ում» դոկտորական ատենախոսությունում արտացոլված սկզբունքների, խնդիրների ու նպատակների հետազոտությունը, կարծում ենք, ֆինանսահրավական գիտելիքների տիրապետմամբ կաջակցի գործնականում ըմբռնելու անկախ զարգացման ուղի բռնած ինքնիշխան ՀՀ ֆինանսաբանկային քաղաքականության էությունը, ինչպես երկրի ներքին, այնպես էլ միջազգային ֆինանսատնտեսական համագործակցության ոլորտում և կնպաստի պրակտիկ գործունեության մեջ ֆինանսահրավական պատասխանատվության վարույթի օրենսդրության պահանջներին համահունչ կիրառմանը:

Դոկտորական ատենախոսության բացահայտումներում հաշվի են առնվել արտասահմանյան երկրների ֆինանսական, հարկային, բանկային իրավունքի գործող օրենսդրական ակտերը, ինչպես նաև արտասահմանյան երկրների դատական պրակտիկայի փորձը:

Ատենախոսական թեմայի բացահայտումները նպատակ են հետապնդում ֆինանսաբանկային մարմիններին կողմնորոշել ֆինանսահրավական պարտականությունների և վարույթի, որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակի կիրառման իրավակարգավորիչների առանձնահատկությունների հարցում:

Ատենախոսական թեմայի խնդիրն է օգնել, որպեսզի գործնական կողմը ճիշտ ընկալվի և լուսաբանվի ֆինանսատնտեսական և ՀՀ ֆինանսական գործունեությունը կարգավորող ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական ակտերի առանձնահատկությունները ֆինանսական գործունեության այնպիսի ուղղություններում, ինչպիսիք են պետական և համայնքային բյուջեները, բանկային վարկավորումը, հարկային, մաքսային գործունեությունը և դրանց իրավախախտումների համար կիրառվող ֆինանսական հարկադրանքի ներգործության միջոցները:

Ն.Գ. Սուքիասյանի հեղինակած «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները ՀՀ-ում» դոկտորական ատենախոսությունը ինքնուրույն, ամբողջական գիտական հետազոտություն է, հարուստ է տասնյակ իրավական հայեցակարգային նորույթներով:

Դոկտորական ատենախոսության հեղինակ Նազելի Գառնիկի Սուքիասյանին կարելի է շնորհել իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Եվրոպական համալսարանի

Կառավարման ամբիոնի վարիչ, տնտ.թ., դոցենտ՝ Ն. Լ. Կիրակոսյան

Ն.Լ. Կիրակոսյանի ստորագրությունը

հաստատում եմ՝

ԵՀ գիտքարտուղար՝ Գ. Մանասյան